


Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի
մարզային փուլի – 2022-2023 ուս. տարի
/տևողությունը – 120 րոպե/
11-12 դասարան

- 1. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՛ սխալ** 1միավոր
- ա.** ՀՀ տարաբնակեցման գլխավոր շերտը ձգվում է երկաթուղու երկայնքով հայ-վրացական սահմանից Արարատյան դաշտ, ապա՝ դեպի Սևանի ավազան
- բ.** ՀՀ բնակչության խտությունը 1500-2000մ բարձրության գոտում ավելի մեծ է՝ քան 1000-1500մ բարձրության գոտում
- գ.** ՀՀ բնակչության խտությունը վերջին տասնամյակում մի փոքր ավելացել է
- դ.** ՀՀ տարածքում 2000մ-ից վեր գոտում մշտական բնակչությունը բացակայում է
- 2. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՛ սխալ** 1միավոր
- ա.** Այլումիսի և տիտանի արտադրությունները էներգատար են
- բ.** Սարքաշինությունը աշխատատար է
- գ.** Գյուղատնտեսական մեքենաշինությունը տեղաբաշխվում է սպառման շրջաններին մոտ
- դ.** Շաքարի արտադրությունը ձգտում է սպառման շրջաններ
- 3. Նկարագրով որոշել պետությունը** 1միավոր
- Այս նոսրաբնակ կղզեխմբային պետությունը սահմանակից է աշխարհի ամենամեծ մահմեդական երկրին և աշխարհի ամենաբազմազգ պետություններից մեկին է: Նրա բնակչության միայն մոտ 13% է քաղաքաբնակ, իսկ մայրաքաղաքի բնակչությունը 300հզ մարդուց էլ քիչ է:
- 4. Նշված եզրույթներից ո՞րը չի վերաբերում տափաստաններին** 1միավոր
- ա.** պրերիա **բ.** ուզբոյ **գ.** փուշտա **դ.** պամպա
- 5. Հայաստանում տարվա ո՞ր եղանակին են տիրապետում.**
- ա.** Ջերմաստիճանային ինվերսիան (շրջադասությունը) 1միավոր
- բ.** Լեռնահովտային քամիները 1միավոր
- 6. Խնդիրներ**
- ա.** 2021թ.-ին ՀՀ ուղևորաշրջանառությունը երկաթուղային տրանսպորտով կազմել է 42.1մլն մարդ-կմ, իսկ օդային տրանսպորտով՝ 416.4մլն մարդ-կմ: Նույն տարում երկաթուղային տրանսպորտով փոխադրված ուղևորների քանակը կազմել է 0.4մլն մարդ, իսկ օդային տրանսպորտով՝ 2.4մլն մարդ: Որքա՞ն է կազմել տրանսպորտի նշված տեսակներից յուրաքանչյուրով տեղափոխման միջին հեռավորությունը: Պատասխանը չկլորացնել 1միավոր
- բ.** Ճանապարհորդը հունիսի 22-ին գտնվում էր Երևանից 0° ազիմուտով 2497.5կմ հեռավորության վրա: Գտնել ճանապարհորդի կորորդինատները և արևի ճառագայթների անկման անկյունը այդ վայրում հունիսի 22-ի կեսօրին: 1միավոր
- 7. Թվարկել**
- ա.** Ասիական չորս վագրերին 1միավոր
- բ.** ՀՀ 4 հիդրոէլեկտրակայան, որոնց դրվածքային հզորությունը մեծ է 100հզ կվտ-ից 1միավոր
- 8. Դասավորել**
- ա.** նշված քաղաքները ըստ մթնոլորտային ճնշման աճող հաջորդականության՝ Լա Պաս, Երևան, Ալեքսանդրիա, Մեխիկո 1միավոր
- բ.** նշված երկրները ըստ մեկ շնչի հաշվով արտանետած ածխաթթու գազի քանակի աճող հաջորդականության՝ Գերմանիա, Իտալիա, Քաթար, Վրաստան 1միավոր
- 9. Բացատրել**
- ա.** Որոշակի պարբերությամբ (1 կամ 2 տասնամյակում կրկնվող) Ավստրալիայի արևելքում դիտվում են երաշտներ և ակտիվանում են անտառային հրդեհները, իսկ նույն ժամանակ Հարավային Ամերիկայի արևմուտքում տեղում են հորդառատ անձրևներ և դառնում սելավների պատճառ: Ինչի՞ առաջացումն է հանգեցնում կլիմայական նման փոփոխությունների: Ինչու՞ է դրա առաջացումը հանգեցնում նման փոփոխությունների 1միավոր

բ. 2016թ.-ից Չինաստանը զգալիորեն մեղմացնում է իր ժողովրդագրական քաղաքականությունը: Ինչու՞ է գնում այդ քայլին: Բացատրեք՝ ներկայացնելով երկու գլխավոր պատճառ 1միավոր

10. Դիտարկեք միտումը և պատասխանեք հարցերին

Նկարում Ասիայի մանգրային թփուտների մակերեսի փոփոխությունն է 2000-2016թթ. ժամանակահատվածում



ա. Ի՞նչ են մանգրային թփուտները

0.5միավոր

բ. Ինչպիսի՞ն է դրանց զբաղեցրած տարածքի ընդհանուր միտումը Ասիայում

0.5միավոր

գ. Նշեք մանգրային թփուտների երկու կարևորություն

1միավոր

11. Բացատրե՛լ հասկացությունը և պատասխանե՛լ հարակից հարցերին

ա. Ի՞նչ է ժողովրդագրական դիվիդենդը (0.25միավոր): Ո՞ր տիպի երկրներն են հիմնականում հասնում ժողովրդագրական դիվիդենդի՝ զարգացող, թե՞ զարգացած (0.25միավոր): Ինչու՞ հենց այդ տիպի երկրները (0.5միավոր):

բ. Ի՞նչ է ազատ տնտեսական գոտին (0.25միավոր): Ի՞նչ առավելություններ է այն տալիս հիմնող երկրին: Նշե՛լ երեք առավելություն (0.75միավոր):

1միավոր

12. Կլիմայագրամները համապատասխանեցնել քարտեզում նշված կետերին (օր.՝ Ա-5) 2 միավոր

